



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

05 օգոստոսի 2025 թվականի N 508-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐԾՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 77  
ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ԲԱԺԱՆՎՈՂ ՀԱՏՎԱԾԻՆ ՀԱՍՑԵ  
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Սպարտակ Սաֆարյանի դիմումը **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոց 77 հասցեի անշարժ գույքը, սեփականության իրավունքի գրանցման վկայական N 07032019-05-0042 հաստատված 07.03.2019թ համաձայն կից հատակագծի բաժանել և բաժանվող 0,06568 հա անշարժ գույքին տրամադրել Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոց 77 բնակելի տուն, 0.00238 հա անշարժ գույքին տրամադրել Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոց 77/1 ավտոտնակ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ԱԿԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05  
ք. Վարդենիս





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharqunik@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

05 օգոստոսի 2025 թվականի N 509-Ա

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑ 80 ՀԱՍՑԵԻ 05-005-0238-  
0093 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,19694  
ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏԵՎՈՂ 392,0 ՔՄ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի N 88 որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ՀՀ Պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի 14/05/2025թ. N\_ՊՆ/510ԳԲ/5523-2025 գրությունը՝ **որոշում եմ**.

1. Համաձայն ՀՀ կառավարության 24 հոկտեմբերի 2002 թվականի << ՀՀ Պաշտպանության նախարարության գույքը հանձնելու մասին>> N 1684-Ա որոշմամբ 05-005-0238-0093 կադաստրային ծածկագրով հասարակական կառուցապատման 0,19694 հա հողամասում առկա նախկին <<Կաթսայատուն>> շինության արտադրական նպատակային նշանակությունը փոփոխել հասարակական շինություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05  
ք. Վարդենիս





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 510-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-051-0127-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2367-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 05-051-0127-0001 ծածկագրով գյուղատնտեսական արտադրայրը ներկա դրությամբ սեփականաշնորհված չէ՝ **որոշում եմ**

1. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 05-051-0127-0001 ծածկագրով 0,04 հա գյուղատնտեսական արտադրայրը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

2. Կատարել իրավունքի պետական գրանցում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

2025թ. օգոստոսի 05  
ք. Վարդենիս







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 511-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 14  
ՀԱՍՑԵԻ 05-008-0085-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ  
ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,11414 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,  
ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 10.06.2008թ. <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության 27.04.2010թ. ՀՕ-50-Ն օրենքի դրույթներով, 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավարի 18.04.2021թ. թիվ 75-Ն հրամանով և հիմք ընդունելով Անդրանիկ Արտավազդի Հովհաննիսյանի դիմումը (ծնված՝ 03.06.1970թ.), 01.07.2025 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ ժառանգական գործ՝ 149/2025, որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և այն հանգամանքը, որ բնակավայրերի՝ բնակելի կատուցապատման 0,11414 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Արտավազդ Հայկարամի Հովհաննիսյանի ժառանգորդ՝ Վարդանուշ Արամի Հովհաննիսյանին (ծնված՝ 30.12.1941թ.) և համասեփականատերեր՝ Անդրանիկ Արտավազդի Հովհաննիսյանին (ծնված՝ 03.06.1970թ.) և Արմինե Արտավազդի Հովհաննիսյանին (ծնված՝ 01.01.1975թ.) պատկանող Ակունք բնակավայր, Ա. Հովհաննիսյան փողոց 14 հասցեում գտնվող հողամասում 1967 թվականին կառուցված բնակելի տուն՝ 81,40 քմ, հացատուն՝ 52,00 քմ, 1970 թվականին կառուցված խոհանոց՝ 13,10 քմ և 1998 թվականին կառուցված մառան՝ 15,60 քմ մակերեսով շինությունները ճանաչել օրինական, որպես Վարդանուշ Արամի, Անդրանիկ Արտավազդի և Արմինե Արտավազդի Հովհաննիսյանների սեփականություն:



2. Սեփականատերերի կողմից փաստացի օգտագործվող Ակունք բնակավայր, Ա. Հովհաննիսյան փողոց 14 հասցեի (ծածկագիր՝ 05-008-0085-0007) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,11414 հա հողամասը համաձայն 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի ճանաչվել է նրանց սեփականություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05  
ք. Վարդենիս







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharqunig@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 512-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-051-0047-0076 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,10655 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2367-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 05-051-0047-0076 ծածկագրով 0,10655 հա հողամասը՝ ներկա դրությամբ սեփականաշնորհված է՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի, 3-րդ փողոցի, 2-րդ փակուղու 05-051-0047-0076 կադաստրային ծածկագրով 0,10655 հա հողամասին տրամադրել Ծովակ բնակավայր, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի 11/1 հողամաս:
2. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայր, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի 11/1 հասցեի 05-051-0047-0076 կադաստրային ծածկագրով 0,10655 հա բնակավայրերի այլ հողեր հողամասը՝ ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:
3. Կատարել իրավունքի պետական գրանցում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



*Handwritten signature in blue ink.*

ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

2025թ. օգոստոսի 05  
ք. Վարդենիս





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 օգոստոսի 2025 թվականի N 513-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑ 38 ՀԱՍՑԵԻ  
ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ԲԱԺԱՆՎՈՂ ՀԱՏՎԱԾԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Արմեն Ավագյանի դիմումը **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի 13-րդ փողոց 38 հասցեի անշարժ գույքը, սեփականության իրավունքի գրանցման վկայական N 10042015-05-0008 հաստատված 10.04.2015թ համաձայն կից հատակագծի բաժանել և բաժանվող 0,23354 հա անշարժ գույքին տրամադրել Ակունք բնակավայրի Ն. Հովհաննիսյան փողոց 38 անասնաշենք, 0,05478 հա անշարժ գույքին տրամադրել Ակունք բնակավայրի Ն. Հովհաննիսյան փողոց 38 /1 հողամաս:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 06  
ք. Վարդենիս





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 օգոստոսի 2025 թվականի N 514-Ա

#### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՆԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՔԱՆԴԵԼՈՒ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը,

Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենքի բակում Վարդենիս համայնքի պատկանող հողամասում, առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, իրականացվել են մետաղյա կոնստրուկցիաներով ավտոտնակի կառուցման շինարարական աշխատանքներ, որով ծանրաբեռնվել է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը:

Համաձայն ՀՀ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> օրենքի 30-րդ հոդվածի <<բ>> կետի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի ընթացքում լուծմանը չեն անցկացվել՝ հիմք ընդունելով ՀՀ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի <<ա>> կետով սահմանված կարգավորումները:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստեր.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում՝ ձեռքբերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենքի բակում Վարդենիս համայնքի պատկանող հողամասում,



առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, իրականացվել են մետաղյա կոնստրուկցիաներով ավտոտնակի կառուցման շինարարական աշխատանքներ, իսկ դրանով ծանոթեցնված հողամասը փաստացի օգտագործվում է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք.

բ. վերոնշյալ ինքնակամ շինությամբ փաստացի ծանոթեցնված է Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանոթեցնված ինքնակամ շինությունից.

գ. առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերնշված հասցեի շինությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան շինարարական հրապարակով կահավորված չէ, կառուցվող շինությունը որևէ կերպ սահմանազատված չէ, մայթը տարանջատված չէ ինքնական շինությունից, ինչից բխում է, որ շինարարության իրականացումը կարող է վտանգ ներկայացնել անձանց կյանքին և առողջությանը, այսինքն՝ վարչական ակտն ընդունելու հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացմանը:

3. Վարչական ակտն ընթունելու հիմնավորումը.

<< Հայաստանի Հանրապետության քաղաքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին >> ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ (այսուհետ սույն հոդվածում նաև՝ Կառավարության որոշում) սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) վրա տարածվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացման վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները: Կառավարության կողմից կարող են սահմանվել սույն մասով նախատեսված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) օրինականացման առանձնահատկություններ:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման



(ապամոնտաժման) հետ կապված դիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև իժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև իժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

Համաձայն ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:



Համաձայն հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Համաձայն <<Քաղաքաշինության մասին >> օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համայնքի տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակալված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման Մասին >> օրենքի 42-րդ հոդվածի 8-րդ կետի Վարդենիսի համայնքապետը, որպես պարտադիր լիազորություն կազմակերպում է ինքնակամ կառույցների կասեցման և ինքնակամ կառույցների վերացման հետ կապված աշխատանքները:

Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի եթե վարչական վարույթի հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի <<ա>> կետի՝ լսումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման:

Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտն ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այլ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական և իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 44-րդ հոդվածի 2-րդ մասի <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման Մասին >> օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, <<



Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ, 60-րդ, հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման պահանջները՝ **որոշում եմ**.

1. Հանձնարարել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնին ապամոնտաժել Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենքի բակում, առանց հողօգտագործման իրավունքի պետական գրանցման օգտագործվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված մետաղյա կոնստրուկցիաներով ավտոտնակը և անօրինական տիրապետումից ազատել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ՀՈԳՎ Վարդենիսի բաժնին, սույն որոշման 1-ին կետի համաձայն՝ Վարդենիսի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառվելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանում:
3. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն դնել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վարդենիս համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. օգոստոսի 07

ք. Վարդենիս

